տանի եւ Ատրպատականի վերայ, որ պատերազմեցաւ Բաբեկի հետ։

222 Թ.[1] Օշին՝ իմանալով, որ Բաբեկ իւրայիններով փախել է (Հայաստան), տեղեկացրեց Հայոց իշխաններին եւ մեծամեծներին, թէ Բաբեկ փախստեամբ եկել է Հայաստանի գաւառներից մէկը, Նոցա անմիջապէս կից, եւ հրամայեց Նոցանից ամեն մէկին հսկել իւր գաւառի վերայ, չթողնել ոչ ոքի անցնել, այլ եկողին ձերբակալել եւ Նորան տեղեկացնել այդ բանի մասին։ Բաբեկ մնաւ Հայոց լեռները, առանց ծանօթ լինելու տեղի հետ, մինչ բոլոր հայ իշխանները հսկում էին իրանց գաւառների ճանապարհների վերայ՝ եթէ մէկը անցնելու լինի, բռնեն Նորան։ Սահլ ի. Սմբատ որ լեռներումն էր, (լուր առնելով Բաբեկի թագստեան տեղի մասին), շտապեց իւր զօրագնդով Նորա մօտ եւ ասաց Նորան՝ "Ե՛կ ինձ հետ իմ ամրոցը, որ քեզ ապաստան կը լինի, իսկ ես՝ քո ծառան. մնացիր այնտեղ քո ուղեկիցների հետ, ապա կ՝մտածես քո անելիքը"։ Բաբեկ համաձայնեցաւ այն պայմանով, որ նա իւր եղբօրը ուղարկէ ի. Ստեփաննոսի ամրոցը, իսկ ինքն գնաց ի. Սմբատի հետ Նորա ամրոցը։ Հետեւեալ առաւօտ Աբդուլլահ մնաւ ի. Ստեփաննոսի ամրոցը, իսկ Բաբեկ մնաց ի. Սմբատի մօտ։ Վերջինս խնայրեց Օշինին, թէ Բաբեկ գտանուում է Նորա դղեակում ողջանդամ. Օշին ուղարկեց Աբու Սայիդին եւ Բուղբարին ի. Սմբատի մօտ, տալով Նոցա մի նամակ առ նա եւ հրամայելով Նոցա, որ յանձնեն այդ նամակը ի. Սմբատին տեղայիներից մէկի հետ եւ չհակառակեն Նորա խորհրդին, որ նա Նոցա կը տայ։ Նոքա կատարեցին Նորա հրամանը։

---

1 Ա.յս ընդարձակ հատուածը թարգմանում եմ քաղուածօրէն, որչափ նա Հայոց պատմութեան հետ կապ ունի։